



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511703, 511704

ՎԴ - Ն-8196

«09» հոկտեմբերի 2018թ.

**ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԱՆԴԱՄՆԵՐԻՆ**

Հարգելի՛ գործընկերներ,

Տեղեկացնում եմ, որ սույն թվականի հուլիսի 27-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովում (այսուհետ՝ Ընդհանուր ժողով)՝ դատարանների գործունեության բարելավման նպատակով՝ դատական իշխանության հեղինակության և անկախության ամրապնդմանն առնչվող հարցերի և առաջարկությունների քննարկման արդյունքում համապատասխան մարմիններին առաջարկներ ներկայացնելու համար, մինչև աշխատանքային խմբի կողմից վերոնշյալ առաջարկները Ընդհանուր ժողովում քննարկելը և հավանության արժանացնելը, ձևավորվել է աշխատանքային խումբ:

Միաժամանակ հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնակատարի սույն թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԴ-Ե-6814 գրությամբ ՀՀ դատարանների նախագահներին, ի կատարումն Ընդհանուր ժողովի 27.07.2018թ. աշխատանքային խումբ ձևավորելու վերաբերյալ որոշման, առաջարկ է արվել կոլեկտիվների կողմից ցանկություն արտահայտելու դեպքում մինչև սույն թվականի սեպտեմբերի 7-ը ներկայացնել մեկ դատավորի թեկնածություն (Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից մինչև 5 դատավորի թեկնածություն, իսկ Վճռաբեկ դատարանից՝ յուրաքանչյուր պալատից մեկ դատավորի թեկնածություն)՝ աշխատանքային խմբում ընդգրկելու նպատակով:

Ամփոփելով սահմանված ժամկետում ստացված թեկնածությունները՝ ձևավորվել է աշխատանքային խումբ՝ հետևյալ դատավորներից.

- Վճռաբեկ դատարան՝**  
Ելիզավետրա Դանիելյան  
Սյրեմիան Միքայելյան
- Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝**  
Տարոն Նազարյան
- Վարչական դատարան՝**

Ռաֆիկ Խանդանյան

**Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝**

Արթուր Ստեփանյան,

Զարուհի Նախչարյան,

Հովիկ Շահնազարյան,

Լիզա Գրիգորյան,

**Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝**

Գևորգ Նարինյան

**Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝**

Գեղամ Մարգարյան

**Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝**

Արման Օհանյան

**Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝**

Սամվել Գրիգորյան:

**Հարգանքով՝**



**ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԱՐՅԱՆ**